

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈՒՈՎԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Վ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ինչպես ուղղական, բացառական, գործիական հոլովների, այնպես էլ ներգոյական հոլովի առկայությունը, որպես ինքնատիպ քերականական ձևավորում ունեցող լեզվական իրավություն, երբեք խնդրահարույց չի եղել ժամանակակից հայերենի քերականություններում. եթե ուղղականն ունի զրո¹, բացառականը՝ -ից, -ուց, գործիականը՝ -ով, -մբ, հոլովանիշ վերջավորությունները, ապա ներգոյականի հոլովանիշ վերջավորությունն է -ում-ը: Առաջին երեք հոլովների համար իրավիճակը նույնն է նաև գրաբարում, ինչը սակայն չի կարելի ասել ներգոյականի համար: Ծիշտ է, գրաբարում, որպես առանձին հոլով, ներգոյականի գոյությունը հիմնականում մերժվել է քերականների կողմից², երբեմն առանց հատուկ քննության և հիմնավորման, սակայն այդպիսով հարցը չի փակվել:

Ուշագրավ է Ա. Այտընյանի տեսակետը գրաբարյան ներգոյականի վերաբերյալ: Տարբերակելով գլխավոր և երկրորդական (այդպիսիք են համարվում պատմականը, պարառականը և կոչականը) հոլովներ՝ ներգոյականը ևս վերջինների կարգին է դասում, սակայն զետեղում է գլխավորների շարքում, «վասնզի եթե -ի նախդրին-վերջահոլով տրական կոչենք, շատ մը բացառություններն ու զարտուղությունները հարկ կ'ըլլայ զատ զատ աւանդել»³: Նրկատի ունենալով, որ Այտընյանը հոլովները տարբերակում է գլխավորապես շարահյուսական շափանիշով, այսինքն՝ հիմք ընդունելով նախադասության

¹ Էդ. Աղայանը այգի, գինի, գոտի, ոսկի և առհասարակ ի-ով հանգող բազմաձևակ բաների վերջին ի-ն համարում է ուղղականի վերջավորություն, նշելով, որ սեռական-տրականի կազմության ժամանակ տեղի է ունենում ի/ու (այգի—այգու, գինի—գինու) հերթագայություն, այդպիսով արդի հայերենի ուղղական հոլովի համար տարբերակելով 2 ձև՝ զրո և -ի վերջերով (Էդ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 233—235):

² Ներգոյականը տարրեր անվանումներով («կացողական», «կացական», «ներգոյական») հին հայերենի հոլովական հարացույցում առաջին անգամ հանդիպում է գրաբարի լատինատիպ քերականություններում (որոնց մի մասը գրաբարում անվանը վերագրում էին տասը հոլով, ընդ որում՝ պատմական, որը ձևաբանական առումով բացառականից տարբերվում էր միայն ի (յ) նախդրի փոխարեն զ նախդրին ստանալով, պարառական, որը կազմվում էր «զ+գործիական» կաղապարով, կոչական, որը կազմվում էր «ո՛վ+ուղղական» կաղապարով: Առաջինը Միքայել Զամյանը մերժում է ն, ըն նախդրներով ներգոյականի կազմությունը և կասկածի ենթարկում —ռ վերջավորությունը ներգոյականին վերագրելը (նշում է, որ այդ վերջն ունի նաև սեռ.—տրականը՝ տեղոջ, որից կազմվում է նաև բացառականը՝ ի տեղոջէ), իսկ Գարրիել Ավետիսյանն, առհասարակ, խիստ կերպով կրճատում է գրաբարի հոլովների թիվը (ընդունում է ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական), զուրս թողնելով նաև ներգոյականը: (Այդ մասին տե՛ս Գ. Զանուկյան, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974):

³ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհարար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, Հավելված, էջ 438:

մեջ նրանց դրսևորած գործառական առանձնահատկությունները, ապա պարզ կդառնա: ոչ միայն պատմականի, պարառականի և կոչականի՝ որպես ինքնուրույն (թեպետև՝ երկրորդական) հոլովների, այլև ներգոյականի ճանաչման հիմունքը: Ինչու կերպ Մ. Աբեղյանը ժամանակակից հայերենում ձևաբանական պլանում ընդունելով հինգ հոլով (ուղղական, սեռ.-տրական, բացառական, գործիական, ներգոյական), շարահյուսական պլանում ընդունում է ութը՝ ճանաչելով նաև հայցական, կոչական և սեռական (տրականից տարբեր) հոլովներ⁴: Ի դեպ, ըստ Գ. Զահուկյանի՝ «հին հայերենում կոչական հոլովի բացակայության մասին կարելի է խոսել միայն որոշ վերապահությամբ, նկատի առնելով միայն հատուկ հոլովական վերջավորությունից զուրկ լինելը»⁵: Ինչպես կտեսնենք ստորև, այդ առումով բավականաչափ ընդհանրություն ունեն գրաբարյան կոչականն ու ներգոյականը:

Ակադեմիկոս Գր. Ղափանցյանը հին հայերենի հոլովական հարացույցում զետեղում է նաև ներգոյական հոլովը՝ եզակի թվում ընդհանուր համարելով սեռական, տրական և ներգոյական հոլովների ձևերը ա (ամ-ի), ի (բան-ի) և ու (զգեստ-ու) հիմքերի դեպքում, իսկ հոգնակի թվում՝ հայցական և ներգոյական հոլովների ձևերը՝ համապատասխան հիմքերի դեպքում (ամ-ս, բան-ս, զգեստ-ս): Ա հիմքով բառերը ընդհանուր հոլովաձև ունեն եզակի ուղղական, հայցական և ներգոյական հոլովներում (զետ), հոգնակի հայցական և ներգոյական հոլովներում (զետ-ս): Ղափանցյանի կարծիքով գրաբարյան հոգնակի հայցականի և (s)-ն հնդեվրոպական է և «ըստ օրինաչափության պետք է ընկներ»: Սակայն պահպանվել է, որովհետև ունեցել է նս (ns) նախնական ձևը, ինչպես հունարենի կրետական բարբառը (*ns) և գոթերենը (-ns): Այդ նս (ns)-ն է, որ հայերենում դարձել է և (s), ինչպես՝ լատ. mens > ուս. мясо, հյ. միս, լատ. mens-is > месся, հյ. ամիս: Հնդեվրոպական լեզուները հոգնակի ներգոյականում ունեցել են *-su (հնդեվրոպական, բալթիկ-սլավոնական) կամ *-si (հունարեն) հոլովանիշ վերջավորությունները: Հին հայերենը ևս նախագրաբարյան մի վաղ շրջանում ունեցել է այդ ձևը, որն էլ, ավելի ուշ կորցնելով ձայնավոր հնչյունը, ձևով նույնացել է հոգնակի հայցականի հետ⁶:

Մեր ժամանակներում հին հայերենում ներգոյական հոլովի առկայության հիմնավորման փորձ է արել էթերի Թումանյանը, մասնավորապես հիմք ընդունելով այն, որ ո պարզ և ո/ա խառն հոլովման պատկանող որոշ գոյականներ (կղզի, տարի, տեղի ևն), ածականներ (առաջին, վերջին, հին, ետին ևն), անցյալ դերբայը (-նալ վերջով՝ գրեցեալ, հեռացեալ ևն), ներգոյական հոլովը կազմում են ոչ թե սեռ.-տր.-ի ընդհանրական, այլ միայն տրականին հատուկ -ոջ և -ում վերջավորություններով: Այն, որ ներգոյական հոլովի իմաստը հին (նաև՝ միջին) հայերենում որոշակի քերականական դրսևվորում է ունեցել, ակնհայտ է և վիճարկման հարց չի եղել նաև ներգոյականի՝ որպես ինքնատիպ քերականական ձևավորում ունեցող հոլովի գոյությունը չընդունողների համար: Որպես ընդհանուր կանոն, գրաբարի քերականություններում նշվում է, որ եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է ի (յ) նախդրով և եզակի տրականով (ի ծովու, յորովայնի, ի կայսեր), իսկ հոգնակի ներգոյականի իմաստն արտահայտվում է ի (յ) նախդրով և

⁴ Մանուկ Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965:

⁵ Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովական սխտեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 132:

⁶ Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Հին շրջան, Երևան, 1961, էջ 254—257: Թ. Գ. Туханян, Древнеармянский язык, Москва, 1971, с. 195—200.

հոգնակի անորոշ հայցականով (ի ծովս, յորովայնս, ի կայսերս): Ի տարբերություն ժամանակակից գրական հայերենի, ուր ինչպես դերանվանական, այնպես էլ անվանական հոլովման հարացույցը բավականաչափ կանոնավոր պատկեր է ներկայացնում (հոլովի քերականական իմաստն արտահայտվում է հոլովանիշ վերջավորությունների լքար—քարի—քարից—քարով—քարում/կամ ներքին հերթագայությունների /հայր—հոր, տուն—տան/ միջոցով)⁸,— դրաբարի հոլովական հարացույցը խառը պատկեր է ներկայացնում (բացառականի և ներգոյականի բուն հոլովական իմաստները դրսևորվում են «ի (յ) նախդիր+հոլովածե» կաղապարով (ի հարցմանէ, ի գետոյ, ի ճանապարհի): Եվ եթե ժամանակակից հայերենում «սեռ.—տրական+մեջ» կաղապարով ներգոյականի հոլովական իմաստի արտահայտումը դեռևս ներգոյական հոլով չէ⁹, այսինքն՝ կապի և կապի խնդրի միջոցով հոլովական ձև չի կազմավորվում, ապա նույնը դժվար է ասել գրաբարյան հոլովածի կազմավորման հարցում նախդրի դերակատարություն մասին:

Նախդրավոր հոլովածեները հայերենը ժառանգել է հնդեվրոպական հիմնալեզվից¹⁰: Այսինքն՝ ինչպես հնդեվրոպական հիմնալեզվի, այնպես էլ հայերենի հին ու միջին փուլերի համար սովորական է նախդիրների մասնակցությունը հոլովական իմաստներ արտահայտելու: Դա պայմանավորված է ոչ միայն նրանով, որ, օրինակ, առանց նախդրի չէին տարբերակվի ա և ո հոլովման պատկանող բառերի եզակի տրականն ու ներգոյականը, այլև այն պատճառով, որ նախդրը որոշակի էր դարձնում հոլովական իմաստը: Այսպես, ըստ Հր. Աճառյանի՝ հայերենի ներգոյականի ի(յ) նախդիրը ծագել է ՀՀլ. en «մեջ» ձևից, որի e-ն, գտնվելով ոնգականի մոտ, «ըստ օրինի դարձել է ի (հմմտ. հինգ <penkwe>, հին <senos>): Հետագայում բառավորքի ո-ն ընկել է: Իսկ բացառականի ի (յ)-ն բխեցնում է ՀՀլ. esk «միջից, դուրս»

⁸ Ըստ էդ. Աղայանի՝ ժամանակակից հայերենում որոշալ հողը հոլովատարերիչ նշանակություն ունի սեռական և տրական հոլովների համար: Այսպես՝ «Մոր կարոտը տանջում է նրան» նախադասության մեջ «մոր» դրված է սեռական հոլովով, իսկ «Մորը կարոտ մնաց» նախադասության մեջ «մորը» դրված է տրական հոլովով: Արդի գրական արևելահայերենում առանձին սեռական և տրական հոլովների տարբերակման համար լեզվաբանը դիմում է նաև փոխակերպման մեթոդին՝ ցույց տալով, որ անորոշ առումով գոյականին փոխարինում է անձնական դերանվան սեռական հոլովածը («Քո կարոտը տանջում է նրան»), իսկ որոշալ առումով գործածված գոյականին՝ անձնական դերանվան տրականի հոլովածը («Քեզ կարոտ մընաց»): (էդ. Աղայան, ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 211—220):

⁹ Ներգոյականը հայերենի միակհոլովն է, որը միայն պարագայական իմաստներ է արտահայտում՝ լինելով որոշակի սահմանափակումով տեղի և ժամանակի պարագա: Ներգոյականի երկու պարագայական իմաստներն էլ արտահայտում են նաև սեռական-տրականով և մեջ կապի միջոցով (Արտակի մեջ, տան մեջ, ուրախության մեջ, սեպտեմբերի մեջ են), բայց առանձին զեպքերում, ընդ որում՝ որոշակի սահմանափակումով, տեղի կամ ժամանակի պարագայական իմաստ կարող է արտահայտվել նաև սեռական-տրականի և այլ կապի միջոցով, օրինակ՝ քարի տակ, լեռան վրա, դռան առջև, (ժամը) հինգի մոտ են: Հետևաբար, քերականական ձևավորման առումով էական տարբերություն չկա «սեռ.—տր. հոլովածե+մեջ կամ վրա (տակ, առջև, մոտ են) կապ»: Շարահյուսական պլանում ևս էական տարբերություն չկա. թե՛ մեկ և թե՛ մյուս զեպքերում էլ տեղի կամ ժամանակի պարագա է: Տարբերությունը պայմանավորված է բացառապես կապի բառիմաստով. եթե մեջ կապը ճշտորեն է արտահայտում —ում-ով ներգոյականի իմաստը, այսինքն՝ ցույց է տալիս ինչ-որ բանի ներսում կամ որոշակի ժամանակի ընթացքում կատարված, կատարվող են գործողություն («Գիրքը պահարանում է» (= պահարանի մեջ)), ապա դարձալ որոշակի սահմանափակումով տեղի կամ ժամանակի պարագայական իմաստ արտահայտելով հանդերձ՝ մյուս կապերից ոչ մեկը չի արտացոլում ում-ով ներգոյականի (այսինքն՝ մի բանի ներսում) իմաստ («Գիրքը պահարանում է» հավասար չէ՝ պահարանի վրա, տակ, առջև, մոտ են):

¹⁰ Զ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, էջ 355—356:

ձևից, որն, օրինակ, լատիներենում, ունեցել է ex, e, իսկ ուուսերենում՝ ԻՅԵ ձևերը: «Հայերենի համար ամենահարմարն է լատ. e ձևը»¹¹: Թերևս ճիշտ չի լինի անտեսել նաև q նախդրի դերը գրաբարում հայցականի որոշյալ առումը արտահայտելու համար (զտուն = տունը, զշինուածս = շինությունները, զԳնել = Գնելը), որը նույնպես գրաբարի հոլովական հարացույցին առնչվող կարևոր առանձնահատկություն է: Այսինքն՝ ինչպես հոլովանիչ վերջավորությունները (այ, ոյ, ոչ, ում, ի, ու, է, ով, մբ, աւ, իւ, ւ, ս, ց ևն), ներքին հերթագայությունները (ու/ա, այ/ա, ի/եա ևն), այնպես էլ նախդիրները գրաբարի հոլովական հարացույցի մաս են կազմում:

Ներգոյական հոլովի կազմությունը երևան է հանում հետևյալ առանձնահատկությունները. 1. ո-ա խառն հոլովման ենթարկվող մի շարք բառեր, որոնք տրականում ունեն նաև սեռականից տարբեր ձև, եզակի ներգոյականը կազմում են «ի(յ) + տրականի հոլովածև» կաղապարով (սեռ.— կղզւոյ, տր.— կղզւոչ, ներ.— ի կղզւոչ, տեղւոյ—տեղւոչ—ի տեղւոչ, այգւոյ—այգւոչ—յայգււոչ. 2. ո պարզ հոլովման ենթարկվող բառերից անցյալ դերբայները և -ին վերջածանցով կամ առանց այդ վերջածանցի որոշ ածականներ եզակի տրականում ունենում են -ում-ով հոլովածև, որից և կազմվում է այդ բառերի ներգոյականը (սեռ.— ասացելոյ, տր.— ասացելում, ներ.— յասացելում, հանդերձելոյ—հանդերձելում—ի հանդերձելում, վերնոյ—վերնում—ի վերնում, վերջնոյ—վերջնում—ի վերջնում, հնոյ—հնում—ի հնում, նորոյ—նորում—ի նորում, աջոյ—աջում—յաջում, ձախոյ—ձախում—ի ձախում ևն):

Տրականում -ում վերջն ունեն նաև՝ ա) ու հարաբերական դերանունը՝ որում. բ) իմ, քո, մեր, ձեր ստացական դերանունները՝ իմում, քում, քոյում, մերում, ձերում, գ) զի՞, զի՞նչ հարցական դերանունը՝ էրո՞ւմ (նաև՝ ի՞մ, հի՞մ). դ) այլ, միւս անորոշ դերանունները՝ այլում, միւսում. ե) մի և առաջին թվականները՝ միում, առաջնում: Բնական է, որ նշվածների ներգոյական հոլովը, ընդհանուր կանոնի համաձայն, կկազմվի տրականի ձևին աճելացնելով ի(յ) նախդիրը:

Եզակի ներգոյականի կազմությունը գրաբարում (ըստ ամենայնի՝ նաև նախագրաբարյան շրջանում) ներկայացնում է մի անկանոն վիճակ: Կարևոր է այն հարցը, թե տրականի՝ սեռականից տարբեր հոլովական վերջավորությունները ինչ ծագում ունեն:

Հնդեվրոպական հիմք-լեզուն (որից և հիմնականում հայերենը ժառանգել է հոլովական համակարգը) բնավոր (թեմատիկ) հիմքերի դեպքում տրական հոլովի համար եզակի թվում ունի *-oi, հոգնակի թվում՝ *-bh(i)os, *-mos, ներգոյական հոլովի համար, համապատասխանաբար, *-ei/oi և *-oisu վերջավորությունները, իսկ անբուն (աթեմատիկ) հիմքերի դեպքում տրական հոլովի համար եզակի թվում ունի *-ei, հոգնակի թվում՝ *-bh(i)os, *-mos, ներգոյականի համար համապատասխանաբար, *-i և *-su վերջավորությունները¹²: Թե՛ բնավոր և թե՛ անբուն հիմքերի դեպքում անհամոզիչ է հայերենի եզակի

¹¹ Նույն տեղում, հ. 5, էջ 80—81:

¹² S6'ս Г. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, том 1. Тбилиси, 1984. (ըստ սեռականի կազմության՝ հնդինականները հնդեվրոպական լեզվաընտանիքում տարբերակում են շրտ խումբ *-oյsi-o-ի խումբ, որի մեջ մտնում են հնդ-իրանա-հունա-հայկական լեզուները, *-o-ի խումբ՝ բալթիկ-սլավոնական լեզուները, *-e/oso-ի խումբ՝ գերմանա (-սլավոնա)-պրուսական լեզուները, *-i-ի խումբ՝ թոխարա-իտալա (-վենետո-մեսսապա)-կելտական լեզուները, էջ 379),— «Новое в зарубежной лингвистике», вып. XXI, Москва, «Прогресс», 1988, с. 24—251: Հր. Անաոյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր 3, էջ 335—346, Գ. Զանուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 36—46:

տրական-ներգոյականի -ոջ և -ում վերջավորութիւնները հնդեվրոպական հիմք լեզվի եզակի տրականի *-ei (անբուն), *-oi (բնավոր) կամ եզակի ներգոյականի *-i (անբուն), *-ei/oi (բնավոր) հիմքերից բխեցնելը: Ընդհակառակն, հավանական է հայերենի հոգնակի ներգոյականի -ս վերջը (որ միաժամանակ նաև հոգնակի հայցականի վերջավորութիւնն է՝ (զ) տունս) հնդեվրոպական հիմք լեզվի ներգոյականի *-su (անբուն) և *-oisu (բնավոր) վերջավորութիւններից բխեցնելը¹³, ինչպես՝

Հհլ— matrsu (հգն. ն)— հյ. ի մարս (հգն. ն),

Հհլ— ekwasu (հգն. ն)— հյ. ի ձիս (հգն. ն),

Հհլ— vlqois (հգն. ն)— հյ. ի գայլս (հգն. ն):

Այդ մասին է վկայում նույն կամ գրեթե նույն վերջավորութեամբ հոգնակի ներգոյականի կազմութիւնը «արիական և բալթիկ-սլավական» լեզուներում, որոնք ունեն su մասնիկը, հունարենում, որն ունի si մասնիկը, օրինակ՝ «հնխ. viqos «գայլ» բառի հոգնակի ներգոյականի ձևերն են սանս. vrkesu, լիթ. vilkusų, հսլ. vlcechъ, հյ. ի գայլս, հուն. lykoisi»¹⁴:

*-su վերջավորութեան -ս (ու)-ն կարող է ընկած լինել նախագրային հայերենի մի վաղ փուլում, հավանաբար հայերենի՝ բարբառային վիճակից ինքնուրույն լեզվի անցման շրջանում, մանավանդ՝ շրջակա ոչ հնդեվրոպական ցեղերի ու ժողովուրդների լեզուների հետ մշտական շփման և առնչակցութեան պայմաններում:

Ի պարզ և ի-ա խառն հոլովման ենթարկվող բառերը հնդեվրոպական եզակի ներգոյականի հետևողութեամբ շարունակել են հայերենի եզակի ներգոյականը կազմել ի (i) վերջավորութեամբ (ի բանի, ի հացի, յայծի, յախտի, ի գուժի, ի նահանգի, ի մեծի, ի վիմի, ի պարտիզի ևն): Այդ երևույթը վերջին հաշվով հանգեցրել է նախ՝ ի վերջով եզակի տրականի և եզակի ներգոյականի նույնացման, այնուհետև, արդեն համաբանութեամբ, առհասարակ՝ եղակի տրականի և եզակի ներգոյականի հոլովաձևերի նույնացման: Թերևս նույնօրինակ համաբանութեամբ է բացատրվում, որ ք պարզ հոլովման ենթարկվող մի շարք բառեր, որոնք ունեցել են նաև ի հոլովման զուգաձևեր¹⁵, փոխանակ եզակի ներգոյականը այդ հոլովման պատկանող բառերի ընդհանուր օրինաչափութեամբ եզակի հայցականից կազմելու, ներգոյական հոլովում եզակի անորոշ հայցականի ձևին ավելացնում են ի վերջը (մարմին— ի մարմնի, մեջ— ի միջի, թուղթ— ի թղթի, գետին— ի գետնի, երազ— յերազի, սուզ— ի սզի ևն): Գրաբարում (հնարավոր է՝ 5-րդ դարից շատ ավելի վաղ՝ նախագրային շրջանում) հոգնակի ներգոյականի և հայցականի վերջավորութիւնների նույնացումը (Հյց. *-ns/ոս և նրգ. *-su (անբուն), Հյց. *-ons յար/ և նրգ. *-oisu (բնավոր), երկու դեպքում էլ տվել է -s(-u)) մղել է համաբանութեամբ գրաբարի եզակի ներգոյականի որոշ ձևեր կազմելու հնդեվրոպականի եզակի հայցականից (*-m/ոմ (անբուն) և *-om (բնավոր)): Այդ երե-

¹³ Ըստ Անտուան Մեյի՝ հին հայերենի «սեռական-տրականի և ներգոյականի միաձուլումը պետք է սկիզբ առած լինի -բ-ով և -ն-ով հիմքերից, ուր սեռականի, տրականի և ներգոյականի վերջավորութիւնները՝ -e/ոս, -ai, -i, ընկել են իրենցից հետո թողնելով մի ձև, որ երեք հոլովների համար էլ նույնն է»: Հոգնակի ներգոյականի -ս-ն (ի գետս) «ակներևորեն հնդեվրոպական հոգնակի ներգոյականի -s-ն է՝ -s j/յս»: Մեյի կարծիքով «ներգոյականի և հայցականի միաձուլումը առաջին անգամ տեղի է ունեցել -բ-ով հիմքերում. գտերս= *dhukterns և *dhukters i/յս -ն-ով հիմքերում *kions i/յս-ն պետք է տար *sjo:ws; Հենց որ մյուս հոլովների սզդեցութեամբ ն-ն վերականգնվել է, ստացվել է *siowns, որ հայցականի հետ նույնն է»: (Ա. Մեյ, Հայերենագիտական ուսումնասիրութիւններ, Երևան, 1978, էջ 237):

¹⁴ Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմութիւն, հ. 1, Երևան, 1940, էջ 27:

¹⁵ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանական, Երևան, 1976, էջ 39:

վույթը խթանել է ներգոյականի ինքնուրույն վերջավորության առաջացմանը՝ -ում (հին—ի հնում, նոր—ի նորում, աջ—յաջում, ձախ—ի ձախում, այլ—յայլում, միւս—ի միւսում, առաջին—յառաջնում, վերջին—ի վերջնում, մի—ի միում), որը սակայն չի ընդհանրացել ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում¹⁶:

Այսպիսով, ներգոյականը, որպես ինքնատիպ քերականական ձևավորում ունեցող հոլով, բավականաչափ պարզ կերպով ներկայացված չէ հին հայերենում: Ամենայն հավանականությամբ, նախագրաբարյան երկհազարամյա ժամանակաշրջանում շարունակվել է հնդեվրոպական ներգոյականի քայքայման գործընթացը, որի արդյունքում էլ եզակի թվում ներգոյականը նույնացել է եզակի սեռական-տրականի (ո հիմքի դեպքում՝ ուղղական-հայցականի), իսկ հոգնակի թվում՝ հոգնակի հայցականի հետ: Քայքայման երկհազարամյա ճանապարհին հատկապես դերանվանական հիմքի վրա եզակի տրականի ընդհանրական (սեռական-տրականի) ձևին զուգահեռ ու և ույ հոլովում-ների պատկանող որոշ բառեր տրականը և ներգոյականը կազմել են -ոջ¹⁷ և -ում վերջավորություններով (տարի—տարւոջ—ի տարւոջ, այգի—այգւոջ—յայգւոջ, հին—հնում—ի հնում, առաջին—առաջնում—յառաջնում ևն), սակայն, ինչպես գրաբարում, այնպես էլ միջին հայերենում դրանք մնացել են իբրև բացառություններ: Ներգոյական հոլովի իմաստը հնդեվրոպական հիմք-լեզվի հետևողությամբ շարունակվել է արտահայտվել ի (յ) նախդրի մասնակցությամբ: Ծիշտ է, գրաբարյան բացառականի կազմությանը ևս այդ նախդիրները մասնակցություն ունեն (ի գագաթանէ, ի սերմանէ, ի քաջութենէ, ի դատերէ, յաստեղէ, ի բանտէ, յատաղձէ, յառուտէ, ի նախանձէ ևն), բայց եզակի, բացառականն ունի նաև ինքնատիպ հոլովանիշ վերջավորություն՝ -է, (բացառություն են կազմում միայն ա և ո հոլովման ենթարկվող բառերը՝ ի տիտանայ, ի բոցոյ), ինչը չի կարելի ասել ներգոյականի մասին: Անկախ այն բանից, որ հին հայերենի ներգոյականի և տրականի ու հայցականի հոլովանիշ ձևերը ինքնուրույն, միմյանցից անկախ ծագում ունեն (ինչպես ասվեց՝ սերում են հնդեվրոպական հիմք-լեզվի համապատասխան ձևերից), հին հայերենում նրանք նույնացել են ի հաշիվ ներգոյականի ինքնուրույնության: Ուստի բավականաչափ հիմնավորված չէ խոսել հին հայերենում ներգոյականի՝ որպես ինքնատիպ քերականական ձևավորում ունեցող հոլովի մասին, այլ կարելի է խոսել հին հայերենում ներգոյական հոլովի իմաստի արտահայտման ձևերի մասին: Գրաբարյան ներգոյականը ներկայացնում է մի անցումային վիճակ, որի ձևերից մեկի՝ -ում-ով ներգոյականի հետագա ընդհանրացումով ձևավորվել է աշխարհաբարի ներգոյական հոլովը:

В. 3. ПЕТРОСЯН — Местный падеж в древнеармянском языке.—

Исследуя языковой материал древнеармянского языка, автор приходит к выводу, что местный падеж древнеармянского происходил из местного падежа индоевропейского языка-основы. В период перехода от индоевропейского диалекта к самостоятельному языку, длящийся около двух тысячелетий, система склонения древнеармянского не достигла четкости, поэтому правильнее говорить о формах выражения смысла местного падежа, но не о его самостоятельности.

¹⁶ Այդ մասին տե՛ս «Անկարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Երևան, 1975 թ.:

¹⁷ Գ. Զահուկյանը ոչ-ը համարում է «հենց բուն ներգոյականի» վերջավորություն, որը հետո տարածվել է տրականի վրա՝ «եզակի թվում տրականի և ներգոյականի վերջավորությունների համընկնելու հետ կապված»: (Գ. Զահուկյան, Հին հայերենի հոլովական սիստեմը և նրա ծագումը, Երևան, 1959, էջ 91):